ԽԱՂԱՂՈՒԹՅՈ՛ՒՆ ՁԵԶ

Զատիկին մենք նշեցինք Հիսուս Քրիստոսի հարության զորությունը մեռելներից: Ի՞նչ եղավ հարությունից հետո: Երբ Նա հայտնվեց Իր աշակերտներին այդ առաջին օրը, առաջին բանը, որ Նա ասաց նրանց, «Խաղաղություն ձեզ»: Եվս երկու անգամ կրկնեց. Ինչո՞ւ Հիսուսն ընտրեց երեք անգամ ընդգծել «խաղաղությունը»: Որովհետև Նա գիտեր, որ մարդկության ամենամեծ կարիքը Աստծո խաղաղության կարիքն է՝ Աստծո հետ խաղաղության մեջ լինել Հիսուս Քրիստոսի հետ փոխհարաբերությունների միջոցով: Միացե՛ք մեզ Հովհաննեսի Ավետարանից այսօրվա ուսուցմանը, քանի որ հովիվ Արմենը մարդկանց հրավիրում է ընդունել Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ և զգալ Աստծո վերջնական խաղաղությունը:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎՀԱՆՆԵՍ 20:19-31

19 *Նույն օրը՝ շաբաթվա առաջին օրվա երեկոյան, երբ հրեաներից վախի պատճառով աշակերտները հավաքվել էին մի տեղ և դռները փակել, Հիսուսը եկավ, նրանց մեջտեղում կանգնեց և ասաց նրանց.* ***<u>Խաղաղություն ձեզ</u>****: **20** Եվ այս ասելով՝ նրանց իր ձեռքերն ու կողը ցույց տվեց: Աշակերտներն ուրախացան, որ Տիրոջը տեսան: **21** Հիսուսը դարձյալ ասաց նրանց.* ***<u>Խաղաղություն ձեզ</u>.*** *ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես եմ ձեզ ուղարկում»: **22** Այս ասելուց հետո նրանց վրա փչեց ու ասաց. Առե՛ք Սուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրան ներված կլինի. **23** եթե մեկի մեղքերը չներեք, չներված կմնա»: **24** Բայց Թովմասը՝ տասներկուսից մեկը, «Երկվորյակ» կոչվածը, նրանց հետ չէր, երբ Հիսուսը եկավ: **25** Մյուս աշակերտները նրան ասացին. «Տիրոջը տեսանք»: Իսկ նա նրանց ասաց. «Եթե նրա ձեռքերի վրա մեխերի նշանը չտեսնեմ ու իմ մատը մեխերի տեղերը չդնեմ և իմ ձեռքը նրա կողի մեջ չխրեմ, չեմ հավատա»: **26** Ութ օր հետո աշակերտները դարձյալ ներսում էին. նրանց հետ էր նաև Թովմասը: Հիսուսը մտավ փակ դռներով, նրանց մեջտեղում կանգնեց և ասաց.* ***<u>Խաղաղություն ձեզ</u>****: **27** Հետո Թովմասին ասաց. Բե՛ր քո մատը այստեղ և տե՛ս իմ ձեռքերը, բե՛ր քո ձեռքը և իմ կողի մե՛ջ խրիր. մի՛ երկմտիր, այլ հավատա՛ե: **28** Թովմասը պատասխանեց ու ասաց նրան. Դու իմ Տերն ես և իմ Աստվածը: **29** Հիսուսը նրան ասաց. Հավատացիր, քանի որ տեսար ինձ. երանի՜ նրանց, ովքեր կհավատան առանց տեսնելուե: **30** Հիսուսն իր աշակերտների առաջ ուրիշ շատ հրաշքներ էլ գործեց, որոնք այս գրքում գրված չեն: **31** Բայց սրանք գրվեցին, որպեսզի հավատաք, որ Հիսուսն է Քրիստոսը՝ Աստծու Որդին, և որպեսզի հավատաք ու նրա անունով հավիտենական կյանք ունենաք:*

- ***Հիսուսն այնպիսի խաղաղություն է տալիս, որ աշխարհն երբեք չի կարող առաջարկել:***

Հովհաննես 14:27 – Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ. ես այն ձեզ չեմ տալիս, ինչպես աշխարհն է տալիս. ձեր սիրտը թող չխռովվի ու չվախենա:

Հովհաննես 16:33 – Այս բաներն ասացի ձեզ, որպեսզի ինձնով խաղաղություն ունենաք: Աշխարհում նեղություն պիտի ունենաք, բայց քաջալերվե՛ք, որովհետև ես հաղթել եմ աշխարհին:

1. ԱՌԱՋԻՆ՝ ՄԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ ԱՍՏԾՈ ՀԵՏ:

Հռոմեացիս 5:1 – Արդ մենք, հավատով արդարացած լինելով, Աստծու հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:

*Կող. 1:19-20 - **19** Որովհետև հաճելի եղավ Աստծուն, որ նրա ամբողջ լիությունը նրա մեջ բնակվի: **20** Եւ նրանով ամեն բան հաշտեցնի իր հետ՝ խաղաղություն հաստատելով խաչի վրա նրա արյամբ թե՛ երկրի վրա, թե՛ երկնքում:*

2. ԵՐԿՐՈՐԴ՝ ՄԵՆՔ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ:

- *Մենք պետք է ձգտենք խաղաղության: Խաղաղություն՝ նշանակում է լինել ազնիվ և հաղթահարել մեր կոնֆլիկտները սիրով, որպեսզի մենք բոլորս լավ հարաբերություններ ունենանք միմյանց հետ և ապրենք ներդաշնակության մեջ:*

*Հռոմեացիս 12:18 – Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությամբ **մնացեք**: Իրար հետ խաղաղությամբ **ապրեք** (Ա Թես. 5:13):*

*Հռոմեացիս 14:17, 19 – **17** Որովհետև Աստծու արքայությունն ուտելիք և խմելիք չէ, այլ արդարություն, խաղաղություն և ուրախություն Սուրբ Հոգով: **19** Ուրեմն հետևե՛ք խաղաղությանը և միմյանց **ամրապնդելուն**:*

- ***Հիմա հարցն այն է, թե ինչպե՞ս կարող ենք առաջնորդել և ապրել խաղաղությամբ:***

3. ԵՐՐՈՐԴ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈՐԾՆ Է ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ:

*21 Հիսուսը դարձյալ ասաց նրանց. **Խաղաղություն ձեզ.** ինչպես իմ Հայրն ինձ ուղարկեց, այնպես էլ ես եմ ձեզ ուղարկում: 22 Այս ասելուց հետո նրանց վրա փչեց ու ասաց. Առեք Սուրբ Հոգին:*

Գաղ. 5:22-23 - 22 Բայց Հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, 23 Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն. այնպիսիների դէմ օրէնք չ'կա:

Փիլիպ. 4:5-7 - 5 Տէրը մօտ է: 7 Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամեն մտքից վեր է, կպահպանէ ձեր սրտերն ու միտքերը Քրիստոս Յիսուսումը:

Հռոմ. 16:20 – Եվ խաղաղության Աստվածը թող շուտով սատանային ձեր ոտքերի տակ խորտակի: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ լինի. Ամեն:

Հռոմ. 15:33 – Եվ խաղաղության Աստվածը թող ձեզ բոլորիդ հետ լինի. Ամեն:

> *Ամեն ինչ կատարված է. . . Խաղաղությու՛ն Ձեզ: Այս երկու պատմական դրույթները հարուստ են աստվածաբանական ճշմարտությամբ և էական/կարևոր նշանակություն ունեն մեր նոր կյանքի համար՝ ի Քրիստոս: Այն խաղաղությունը, որը Հիսուսը հռչակեց և իրականացրեց Նոր Կտակարանում, դա Հին Կտակարանում խոստացված շալոմի կատարումն է: - Գ. Ռ. Բիսլի Մյուրեյ*

Թվոց 6:26-27 – 24 Եհովան օրհնէ քեզ, եւ պահէ քեզ. 25 Եհովան պայծառացնէ իր երեսը քեզ վերայ եւ ողորմէ քեզ. 26 Եհովան բարձրացնէ իր երեսը քեզ վերայ, եւ խաղաղութիւն տայ քեզ:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ